ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

ԱՄԵՐԻԿԱ

Կին 'ի Խալաբա.

Այր և կին 'ի Կուատեմալա.

Մեխիգոյի՝ Վերա-Գրուսի նահանգին մէջն է Խալաբա, զուարճալի և բարեբեր դրքի մը վրայ շինուած. 13,000 բնակիչ ունի։

Մինչեն Ամերիկայի ընդարձակ տէրութիւնն է Կուատեմալա 600,000 բն. ունի, և եօթը գաւառ կը բաժնուի ամբողջ երկիրը։ Կուատեմալա-Նոր կ'ըսուի մայրաքաղաքը, որ 1774ին շինուեցաւ. տները ընդհանրապէս միայարկ են՝ երկրաշարժի վախի պատճառաւ։ Կուատեմալա-Հին ըսուած քա-

Կին 'ի Բուէպլա.

Հնդիկ կին Քիդոյի.

ղաքը 1541ին կործանեցաւ Ակուա հրաբղխին ցնցմունքէն։

Մեխիգոյի նահանգներէն մէկն է Բուէպլա, զոր ուրիշ անգամ յիշեր ենք։

Քիդոյ՝ հարաւային Գոլումպիայի մասն է, և առանձին հասարակապետութիւն է, որ 1830ին ձևացաւ։ Քիդոյի մէջէն կ'անցնին Անտեայց լեռները, որոնց արևելեան կողմը ընդարձակ դաշտեր կան՝ ուր Հնդիկք կը բնակին։ Քիդոյի երկիրը երեք նահանգ էր, որ հիմա ութ գաւառ կը բաժնուին. բնակիչն է 670,000։ Երկրին անունովը կը կոչուի մայրաքաղաքն ալ, որ 8886 ոտնաչափ բարձր դիրք ունի ծովուն երեսէն։ Քաղաքը մեծագործ շէնքերով զարդարուած է, բայց փողոցները նեղ են և բազմապտոյտ։